

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

«ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ» № 4 ԺՈՂՈՎԱԾՈՒՆ

Մատենադարանի բազմազան և բազմալեզու ձեռագրերի հավաքածուն և արխիվային թանկարժեք փաստերը պարունակում են մեր ժողովրդի պատմության, դրականության, փրկիսփառության, բժշկության, արվեստի, տիեզերագիտության, մաթեմատիկայի և գիտության ու արվեստի այլ բնագավառների վերաբերյալ անգնահատելի գանձեր:

Ամենևին չթերագնահատելով Մատենադարանի նյութերի հիման վրա կատարված աշխատանքներն, անհրաժեշտ է նշել, սակայն, որ դրանք շատ փոքր ու չնչին են՝ նրա ֆոնդերի բազմահարուստ պարունակության հետ համեմատած: Մասնավորապես Մատենադարանը իր գիտական կոլեկտիվի փոքրաքանակության հետևանքով շատ համեստ լուծման ունի ուսումնասիրությունների ու հրատարակության բնագավառում: Ուրախությամբ պետք է նշել, որ տարեց-տարի Մատենադարանի աշխատակիցները, որքան երևում է այդ նրա հրատարակություններից, կատարում են ավելի բեղուն աշխատանք: Եթե նրա, նույնպես գնահատելի նյութերի առաջին և երկրորդ ժողովածուները հրատարակվեցին մեծ ընդհանուր ձևերով (1941 թ. լույս տեսավ № 1, իսկ 1950 թ. № 2-ը), համեմատաբար փոքր ծավալով ու ընդգրկումով, ապա նոր «Բանբեր Մատենադարանի» խորագրով այդ ժողովածուն արդեն հրատարակվում է պարբերաբար, համեմայն զեպս ոչ մեծ բնդհատումներով՝ և ավելի ծավալուն ու ծանրակշիռ ձևով:

Վերջին այս հանգամանքը պայմանավորված է մի կողմից անցած ժամանակաշրջանում Մատենադարանի կոլեկտիվի հասունացմամբ ու նոր երիտասարդ ուժերով համալրվելու, մյուս կողմից աղբյուրագիտական-բանասիրական հետազոտությունների ասպարեզում կատարված առաջընթաց տեղաշարժերով:

«Բանբեր» մեզ հնաաբբերող № 4 ժողովածուն ունի հարուստ բովանդակություն ու լայն ընդգրկում:

Ժողովածուն բացվում է Լ. Պաշկևյանի Մատենադարանի անցյալի և Սովետական իշխանության տարիների պատմությունը ուրվագծող փաստալից հոդվածով:

Հայ ժողովրդի ստեղծած ձեռագրերի գանձերից միայն փշրանքներ են հասել մեզ. հազարավոր ձեռագրեր են ոչնչացվել օտարերկրյա բարբարոս նվաճողների կողմից: 1441 թ. հետո, երբ կաթողիկոսական աթոռը Սսից տեղափոխվում է Էջմիածին, այստեղ զգալի աշխատանք է կատարվում ձեռագրերի ընդօրինակման գծով, որը, սակայն, մերթ փոքր փրկելիք է մեջ ընկնելով ու կարգավորվելով, մերթ փառանի ու ավարառության ենթակվելով, 19-րդ դարի սկզբներին կարողանում է պահպանել միայն աննշան քանակությամբ ձեռագրեր: Պետական Մատենադարանի հիմք կազմող Էջմիածնի Մատենադարանի համար նոր շրջան է սկսվում 1828 թ., երբ Արևելյան Հայաստանը, ազատագրվելով պարսկական լծից և անցնելով ռուսական տիրապետության տակ, զերծ է մնում օտարերկրյա թալանիչ արշավանքներից, որով էլ նպաստավոր պայմաններ է ստեղծվում նրա պարզացման համար: Դրանում հանդգնելու համար բավական է հիշել ձեռագրական ֆոնդի աստիճանական աճը ցույց տվող հոդվածագրի բերած թվերը: 1840 թ. Մատենադարանում կար 312 ձեռագիր, 1897 թ.՝ 3338, 1906 թ.՝ 3788, 1913 թ.՝ 4060 ձեռագիր:

Մատենադարանի պատմության ընթացքում նրա զարգացման համար նոր և աննախնթաց պայմաններ է ստեղծվում միայն Հայաստանում սովետական կարգերի հաստատումից և Մատենադարանի պետականացումից հետո: 1920 թ. սկսած մեծ աշխատանքներ են կատարվում ձեռագրեր հավաքելու և ձեռագրական ֆոնդը, արխիվը և դրադարանը հարստացնելու ուղղությամբ: Այդ ամենի շնորհիվ անցած երեսունյոթ տարիների ընթացքում Մատենադարանի ձեռագրերի հավաքածուն աճելով հասել է շուրջ 10000-ի, արխիվային բաժինը 200000 արխիվային փաստաթղթի:

¹ Բանբեր Մատենադարանի № 3 ժողովածուն հրատարակվել է 1956 թ., իսկ № 4-ը 1958 թ.:

Սովետական իշխանության տարիներին դիտական հիմքերի վրա են դրվել և համապատասխանաբար մեծ աշխատանքներ են տարվել նաև ձեռագրերի պահպանման, բուժման ու վերանորոգման, նրանց գիտական նկարագրության ու ցուցակագրման և բնագրերի հրատարակման և ուսումնասիրության գծով:

Մատենադարանի զարգացման ողջ ընթացքը բնորոշող վստահելի ու խոսուն տվյալներն էլ թվերի հետ ծանոթանալուց հետո միանգամայն տեղին ու իրավացի են դառնում հոգիվածագրի խոսքերը. «Այսպիսով, պարզ է դառնում, որ հարյուրամյակների պատմության ունեցող մեր Մատենադարանը իսպառ քայքայման վիճակից զուրկ է գալիս 1828 թվականից հետո, երբ Արևելյան Հայաստանը թոթափելով պարսից բռնապետական լուծը՝ մտնում է ուսական կայսրության կադմի մեջ: Նա բուռն վերելքի ու զարգացման շրջան է ապրում միայն Հոկտեմբերյան Մեծ ուղուղեցիայի հաղթանակից և Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո» (էջ 13):

Բանասեր Ա. Ղանալանյանի հոգիվածը նվիրված է հայկական առածների գրավոր սկզբնագրերները պարզարանելու հարցին: Նա ցույց է տալիս, որ ժողովրդական բանասիրության հիմք կադմոգ բանավոր ձևով ստեղծված առածների ու ասացվածքների հետ միասին գոյություն է ունեցել նաև գրավոր աղբյուրներից առաջ եկած ասույթներ, որոնք իրենց բովանդակությամբ հարազատ լինելով ժողովրդի մեծամասնության աշխարհայացքին, ճաշակին ու հոգեբանությանը, ժամանակի ընթացքում տարբեր ուղիներով ու մեթոդներով մուտք են գործել նրա բանավոր ավանդության մեջ՝ տարբեր դարերի աշխարհիկ ու կրոնական դանդաղան հուշարձանների մեջ առկա բազմաթիվ իմաստային ասույթներից, պատկերավոր արտահայտություններից ու աֆորիզմներից:

Գուկերտ մեթոդով կատարելով և քննարկելով մեր ժողովրդի առած-ասացվածքների համար նյութ մատակարարող երեք հուշարձանների՝ Աստվածաշնչի, Կուրիկ աշխարհի իմաստասերների «Բանքերի», Քիկարի «Պատմության» ասացվածքները և համեմատելով մեր ժողովրդի առած-ասացվածքների հետ, ցույց է տալիս նրանց մեջ գոյություն ունեցող նմանությունները, որոնք ոչ թե պատահական զուգահեռություններ են, այլ գերադասապես բառագի համընկնումներ ու նույնություններ:

Նյութին լավատեղյակ, բանիմաց մասնագետի ձեռքով շարադրված հոգիված համոզում է, որ հայ ժողովուրդը ևս վերցնելով իրեն հասած ուրիշ ազգերի որոշ թեմատիկ խոսքեր ու պատկերավոր արտահայտություններ, այն ստեղծագործաբար վերամշակելով և իր բնաշխարհի առածների շարքը մտցնելով, նրանց մեջ գտել է իրեն հուզող հասարակական, բարոյական, կենցաղային, կրոնական շատ հարցերի պատասխան:

Մատենադարանի հետ մոտիկից կապված և նրա բարեկամ պրոֆ. Ի. Արուստան հայտնի է հայ-վրացական կուլտուրական ժառանգության ասպարեզում կատարած իր ուշադրավ աշխատություններով: Այս անգամ նա հանդես է եկել 10-րդ դարի վրացերեն մի ձեռագրի հայերեն հիշատակագրությունների քննությանը նվիրված հոգիվածով: Փորձածավալ այդ հոգիվածում հեղինակը հայ բարբառագիտության ուսումնասիրությանը նպաստող ուշադրավ նյութեր է բերում և հանդում այն հետևություն, որ հնում հայերեն բարբառների գոյությունը անվիճելի է:

Ինչպես հայտնի է, 989 թ. ընդորինակված Լճիաթնի փղոսկրե ավետարան կոչված հոյակապ ձեռագրի մասին դրվել են մի շարք ուսումնասիրություններ, սակայն նրա դրությունից վայրը մնացել է զեռն անորոշ ու չլուծված: Վաստակավոր հնագետ Ս. Բարսեղյանը, հենվելով այն փաստի վրա, որ ձեռագրում, որպես գրչության վայր, հիշատակված է Նորավանքը և բերելով մատենագրության մեջ հիշվող տարբեր ժամանակաշրջանում կառուցված չորս նորավանքների մասին տվյալները, բանասիրական-տեղադրական դիպուկ է ու սուր դիտողություններով հիմնավորում և ապացուցում է, որ Ավետարանի գրչության վայրը Տաթևի մոտի Բեհնո նորավանքն է (այժմ Գորիսի շրջան): Այս մանրամասն տալիս է վանքի մեծարժեք սրբաբանականների նկարագրությունը (իրենց նկարներով) ձեռագրի մանրանկարները ուսումնասիրողներին նպաստելու համար, նշելով, որ այդ մանրանկարների և Բեհնո նորավանքի սրբաբանականների միջև կան ուշադրավ ընդհանրություններ:

Միջնադարյան մատենագրական դանձերի մեծագույն մասը, ինչպես նշվեց, անդամ ոչնչացվել է կորստյան են մատնվել կամ թերի ու պակասավոր, երբեմն էլ չնչին բեկորներով են հասել մեզ: Ժամանակի ընթացքում դրանք համարվել ու համարվել են, փոփոխությունների ու լրացումների ենթարկվել և դրանով իսկ նյութ տվել բազմաթիվ թյուր ու

սխալ ըմբռնումների: Ահա թե ինչու մատենագրական ճշգրտումներ կատարելուն նվիրված ամեն մի բանասիրական ուսումնասիրությունն առանձնահատուկ արժեք և նշանակություն է ստանում: Յովով պետք է նշել, որ անցյալում և Սովետական իշխանության տոհմին տասնամյակում ավագ սերնդի մեր հայադեո ներկայացուցիչների կողմից աշխուժորեն կատարվող բանասիրական հետախուզությունների տրադիցիան վերջերս անուշադրության, դրեթե մոռացության է տրվել: Այդ իսկ պատճառով բանասիրական նման կարգի աշխատանքները լարժանի են ամենայն ուշադրության և քաջալերման: Անտարակույս ինքնին խրախուսանքի արժանի է «Բանբերի» մեզ հետաքրքրող ժողովածուում «Բանասիրական հետախուզումներ» ենթաբաժնի առկայությունը: Ծանկալի է Բանբերի հաջորդ համարներում այս ենթաբաժինը տեսնել ավելի ընդլայնված ու ծանրակշիռ ձևով:

Այս ենթաբաժնի հոդվածաշարքում առավել ուշադրավ է Գ. Արզարյանի «Դիտողություններ»-ը Սերեոսի պատմության վերաբերյալ:

Ինչպես հայտնի է, մեր միջնադարյան մատենագիրները հիշում են Սերեոս անունով մի պատմիչ, որը զբեղ է չերակլի պատմությունը՝ «Պատմություն չերակլի, որ ի Սերեոս է եպիսկոպոս է ասացել»: Տակավին 1842 թ. չերակլի Շահխաթունյանը էջմիածնի ձեռագրերից մեկում պատահելով մի անխորագիր բնագրի և ենթադրելով, որ դա Սերեոսի Պատմությունն է, բնագրի վրա մակագրում է՝ «Սերեոսի եպիսկոպոսի պատմություն ի չերակլի», որից հետո այդ երկը մեր մատենագրության մեջ է մտնում որպես Սերեոսի պատմություն:

Բանասեր Գ. Արզարյանը, հենվելով «Պատմության» բովանդակության և նրա զերնագրի միջև զոյություն ունեցող հակասության վրա, մատենագրական մանրադիտակ պարզումների միջոցով դալիս է այն հավաստի հետևությունը, որ Շահխաթունյանի հայտնաբերած ձեռագիրը Սերեոսի չերակլի պատմությունը չէ:

Այնուհետև հոդվածագիրը, բերելով որոշ տվյալներ, դառնում է, որ մինչև այժմ Սերեոսին վերագրված պատմության հեղինակը Ոոսրով անունով մեկն է, որը նույնպես հաճախ հիշատակվում է սկզբնաղբյուրներում հայ պատմիչների շարքում:

Մեր կարծիքով, փաստերի սղություն պատճառով պակաս համոզիչ է հոդվածագրի այն պնդումը, թե այդ Ոոսրովը չերակլի տաճարի միաբան Ոոսրովին է: Կարծում ենք ընդ Արզարյանը կշարունակի իր պարզումները Մատենագրանի փաստերով հարուստ ձեռագրերի մեջ նոր տվյալներ գտնելու և իր կարծիքը ավելի հավաստի դարձնելու համար: Ընդունելի պետք է համարել հեղինակի՝ «Պատմագիրը հայոց»-ի հեղինակը Վարդան Բաղիշեցին չէ և «Է դարում Զաքարեա պատմիչ չի եղել», մատենագրական ճշգրտումները:

Ուշագրավ է Կ. Յուզարյանի առաջարկած մատենագրական մի սրբագրությունը: Նկատի ունենալով ակադ. Բրոսսի սրամիտ դիտողությունը և հենվելով Ա. Լաստիվերացու պատմության ձեռագրերից մեկի տարբերակների վրա, նա ցույց է տալիս, որ Ա. Լաստիվերացու պատմության մեջ «Փռանդ» կոչվածները «վռանդ»-ներ են: Այդպես են կոչվել ռուսական տարեգրության մեջ վարյական հորջորջող, Կիևյան Ռուսիայից Բյուզանդիա անցնող, ռուս-սկանդինավ վարձկանները:

Հայ միջնադարյան կուլտուրայի պատմության մեջ իր պատվավոր տեղն ունի մանրանկարչությունը, որն իր զարգացման գագաթնակետին հասավ Կիլիկյան Հայաստանում:

Արվեստագետ Լ. Աղարյանը 1873 թ. ընդօրինակված նարեկի մանրանկարները վերլուծամամբ ցույց է տալիս Կիլիկիայի մանրանկարչական արվեստի ձևավորման հիմնական օջախներից մեկի՝ Սկևոյի մանրանկարչական դպրոցի, նրա ինքնուրույն ոճի առանձնահատկություններն ու բնորոշ կողմերը: Հոգվածը փաստալից ու հաջողված համարելով հանդերձ, կարծում ենք, որոշ չափով համարձակ է մի ձեռագրի ընձեռած նյութի հիման վրա հետևություններ անել մանրանկարչական մի ամբողջ դպրոցի մասին:

Բ. Չուղասյանը, Ֆրիկի գիվանում գտնվող հայատառ պարսկերենով գրված քառյակը, բանասիրական ուշադիր քննության ենթարկելով, դալիս է այն հետևություն, որ քառյակի թարգմանիչը Ֆրիկն է: Այս փաստն ուշագրավ է միջնադարյան մեր խոշոր բանաստեղծի ստեղծագործության ամբողջական ուսումնասիրության համար: Պարզվում է, որ նա քաջ տեղյակ է եղել պարսկերենին և պարսիկ դրականությանը և իր ստեղծագործություններում ոգեշնչվել նրանով:

Ս. Արևիկյանը «Բանրերի» այս համարում հանդես է եկել Տաթևի փիլիսոփայական դպրոցի ներկայացուցիչներ Հովհան Որոտնեցու և առանձնապես Գրիգոր Տաթևացու աշխարհայացքին նվիրված հետաքրքիր հոդվածով: Տալով վերջինիս սոցիալ-քաղաքական հայացքների և փիլիսոփայական առաջադիմական տենդենցների ճիշտ բնութագիրը, հեղինակը զրանով իսկ վեր է հանում Տաթևացու փիլիսոփայությունը նշանակությունը հայ միջնադարյան մշակութի պատմության մեջ:

18-րդ դարի վերջերից, երբ ավելի ու ավելի ռեալ է դառնում Ռուսաստանի օգնությամբ պարսկական բռնակալությունից ազատագրվելը, հայ մտավորականության տարրեր շերտերում հասունանում է Հայաստանի ապագա վիճակի, նրա ինքնուրույնության խնդիրը և այդ առթիվ կողմում են տարրեր նախադժեր: Այս կարևոր հարցը վաղուց է զբաղել պատմաբանների ուշադրությունը, որոնք գտել են, թե առկա տարրեր զանազանի նախադժերը արտահայտել են հայ տարրեր հասարակական շերտերի մտայնությունը: Հմուտ բանասեր Աս. Մնացականյանը, ուսումնասիրելով քննարկող նախադժերի ծագման պատմությունը, այլ տեսանկյունով մոտենալով և ուշադրություն դարձնելով որոշ կարգի արխիվային փաստաթղթերի վրա, ցույց է տալիս, որ երկու դաշնագրերի հակադրությունը ոչ թե նախադժերի հեղինակների սոցիալ-քաղաքական տարրեր զաղափարախոսության արդյունք էր, այլ պարզապես դաշնագիրը կնքող երկու կողմերի շահերի և ձգտումների հակասությունների հետևանք:

Եթե ուսական ցարիզմը աշխատում էր լայնացնել ու ամրապնդել իր հարավային սահմանները, ապա հայ ժողովրդի ներկայացուցիչները ձգտում էին վերականգնել հայկական պետականությունը: Ներկայացնելով Շ. Շահամիրյանի անվամբ հայտնի նախագիծը և մերժում ստանալով ուսական կողմից, Ն. Արզումանը ստիպված է լինում կազմել նոր նախագիծ: Անշուշտ, տարրեր նախադժերի երևան գալը չպետք է բացառել նրանց հեղինակների տարրեր զաղափարական հայեցակետ ունենալու հանգամանքով: Այդ մոտենետր ևս նշանակություն է ունեցել և թողել է իր հետքը, որը չի բացառում նաև Աս. Մնացականյանը: Անտարակույս կարևոր այս հարցը չի կարելի վերջնականապես լուծված համարել: Աս. Մնացականյանը տիրող կարծիքին հակառակ նոր տեսակետ է առաջ քաշում, որը խիստ ուշադրավ է, մտքեր է շարժում և մտածելու տեղիք տալիս: Հայ ուսական դաշնագրության խնդիրը և նրա հետ կապված մի շարք հարակից հարցերի վերջնական պատասխանը կարելի է տալ բոլոր այդ երևույթների համակողմանի, գիտական լուրջ ու մանրակրկիտ ուսումնասիրություններից հետո միայն:

Պակաս կարևոր ու հետաքրքիր չեն նաև «Բանրերի» հաջորդ հոդվածներ բաժնի նյութերը:

Մատենադարանի հայերեն շուրջ երկու հազարի հասնող ձեռագիր պատառիկների հավաքածուն հավերժորեն կորստյան մատնված հնադարյան ձեռագրերի վերջին բեկորներն են ներկայացնում:

Բանասեր Ս. Քոլանջյանը տարիներ շարունակ համերուսթյամբ և բարեխղճությամբ կատարում է պատառիկների վերծանման և արժեքավորման գծովարին ու շատ շնորհակալ աշխատանքը: Ես մեզ հետաքրքրող ժողովածուին մասնակցել է իր ընդարձակ ուսումնասիրություններից միայն Մովսես Խորենացու նորահայտ երկաթագիր պատառիկի քննությունը նվիրված հոդվածով, որով ոչ միայն ճշգրտում է մտցնում պատմահոր գիտական հրատարակության բնագրի մեջ, այլև ցույց տալիս, որ Դանիելյան նշանագրերը օգտագործվել են անհամեմատ ավելի կարճ ժամանակով, քան մինչև այդ ենթադրվում էր:

Այս բաժնում արժեքավոր ուսումնասիրություններ են զետեղված միջնադարյան Հայաստանի կազմերի զարգացման արվեստի բնորոշ ու տիպիկական կողմերի, հայ հեղինակի դործ հանդիսացող ձեռագիր բժշկարանի, Մ. Լրիմեցու չափածո անեծքի մի ձեռագրի ասեղնագործ շաղկիկի մասին. բնութագրված են Մատենադարանի ձեռագրերը և տրված է նրանց պատմադրական արժեքը, բերված են նոր նյութեր Մ. Նալբանդյանի Հնդկաստանում կատարած աշխատանքի և Պերճ Պաշյանի վերաբերյալ:

Լ. Խաչիկյանի «Կոստանդին Բարձրբերդցու թուղթը առաքված Արևելյան Հայաստան, 1251 թվականին» հոդվածի նյութը վերցված է Լենինգրադի Մայրիկով-Շչեգրինի անվան Հանրային գրադարանի հայերեն ձեռագրերի հավաքածուից ցարդ հայագիտությանը անձանթ ձեռագրից: Հեղինակը հմտորեն քննարկում է Կոստանդին կաթողիկոսի «Խրատական թղթի» կանոնները, հանգամանորեն վեր հանում նրանց պատմական և ազդագրա-

կան նշանակություններ և ապա բերում «Թղթի» ամբողջական բնադիրը, որը լեզվական և այլ առումներով նույնպես շատ ուշադրավ է:

Բնադիրը և թարգմանություններ բաժանում, Լ. Պաշիկյանի հոգվածից բացի, արժեքավոր ուսումնասիրություններ են կատարված և ուշադրավ նոր նյութեր բերված Կիլիկիայի Հայկական պետության և Բյուզանդիայի փոխհարաբերությունների, Հովհաննես Խրդնկացու իմաստասիրական անհայտ աշխատության, հայ հեղինակի կողմից 12-րդ դարում կազմած Հնդկաստանի ուղեցույցի մասին: Ա. Պապոյանի թարգմանությամբ բերվում է Անտիոքի խաչակիր պետության օրենսդրելի «Անսիդե Անտիոքայ»-ի ռուսերեն թարգմանությունը: Այս օրենսդրելի հին Փրանսերեն բնադիրը չի պահպանվել և այն հայտնի է միայն հայերեն թարգմանությամբ:

Վերջին՝ Մատենագիտությունը բաժինը ընդգրկում է Վրաստանի կենտրոնական պատմական արխիվի շուրջ հիսուն ձեռագրերի պրոֆ. Լ. Մելիքսեթ-բեկի կազմած մասնորաման արժեքավոր ցուցակը և Շ. Շահնազարյանի հոգվածը, ուր հեղինակը նկարագրում է Մատենադարանի հնատիպ գրքերի հավաքածուում պահվող այն գրքերը, որոնք մինչ օրս դուրս են մնացել հայ մատենագիտական ցուցակներից և հայ ազգագրության պատմության մասին գրված ուսումնասիրություններից:

Հնարավոր չէ մի փոքր գրախոսականով թեկուզ համառոտակի ներկայացնել «Բանբերում» տպագրված հոգվածները և նյութերը ամբողջությամբ, անհրաժեշտ է նշել միայն, որ այստեղ տեղ են դրել հայագիտության տարբեր մասնագիտերին վերաբերվող գերազանցապես նոր նյութերի վրա կառուցված բազմաթիվ արժեքավոր ուսումնասիրություններ:

Թեև ժողովածուն կազմված է գիտական բարձր ասլարատով, խնամքով և բարեխղճությամբ, այնուհանդերձ նկատվում է անփութություն որոշ հետքեր:

Դժբախտաբար քննության ենթակա ժողովածուում ավելի քիչ տեղ է հատկացված բնադիրի հրատարակությանը, քան նախորդ համարում: Կարծում ենք, Մատենադարանի «Բանբեր» իր կոչմամբ պետք է որ ուշադրությունը կենտրոնացնի առավելապես տեքստերի հրատարակման և թարգմանական աշխատանքների վրա: Առավել ևս այժմ «Պատմա-բանասիրական հանդեսի» հրապարակ գալուց հետո, մեր այս ցանկությունը անհրաժեշտ ու անխուսափելի լինում է դառնում, որի հետ, անշուշտ համամիտ կլինի նաև Մատենադարանի ղեկավարներ:

Ժողովածուում տեղ պտած հարուստ նյութերը մեր մյուս ռեսպուբլիկաների մասնագետներին մատչելի դարձնելու նպատակով ցանկալի է յուրաքանչյուր հոգվածի վերջում տալ ռուսերեն լեզվով ամփոփում:

«Բանբեր Մատենադարանի» ներկա ժողովածուն կարևոր ներդրում է հայագիտական մնայուն գրականության մեջ:

Վ. Բ. ԲԱՐՈՒԴԱՐՅԱՆ